

**Ք. ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, ՈՍԿԵՐԻՉՆԵՐԻ Փ., Հ.  
2/5, 2/6 և 2/7 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ  
ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
(լրամշակված տարբերակ)**



ՆԱԽԱՁԵՌՆՈՂ՝  
Յուրի Աֆրիկյան

Երևան 2024

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	4
2. ՇՄԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	4
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ.....	7
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՔԱՐՏԵԶ-ՍԽԵՄԱՆԵՐԸ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....	8
4.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները.....	12
4.2 Կլիման.....	13
4.3 Օդային ավազան .....	21
4.4 Ջրային ռեսուրսներ.....	26
4.5 Հողերի նկարագիրը.....	28
4.6 Բուսական աշխարհ.....	28
4.7 Կենդանական աշխարհ.....	28
<b>4.8 Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....</b>	<b>29</b>
4.9 Կանաչապատման լուծումներ: Դենդրոնախագիծ.....	30
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ).....	30
6. Ջրամատակարարում և ջրահեռացում.....	31
7. Էլեկտրամատակարարում .....	31
8. ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ.....	32
8.1 Աշխատանքների կատարման սխեմա .....	33
8.2 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը.....	34
8.3 Ժամանակավոր շինություններ.....	34
8.4 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները .....	35
8.5 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում .....	35
9. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ.....	36
9.1 Թափոնների կառավարում .....	36
9.2 Կառուցապատվող տարածքին մոտ տեղակայված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ակնարկ-վերլուծություն .....	36
10. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՏՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	39
10.1 Ռիսկերի գնահատում.....	39
10.2 Արտանետումների աղբյուրները.....	39
10.3 Մթնոլորտային օդ.....	40
10.4 Ջրային ռեսուրսներ.....	40

10.5 Հողային ռեսուրսներ.....	40
10.6 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը.....	41
10.7 Հակահրդեհային միջոցառումներ.....	42
10.8 Աղմուկ և թրթռում .....	42
10.9 Թափոնների կառավարում.....	43
10.10 Տարածքի բարեկարգում կանաչապատում .....	44
11. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ .....	44
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	45
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ .....	51
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ .....	55
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՆԴՈՐՐԱԳԻՐ .....	62
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ/ԴԵՆԴՐՈ ՆԱԽԱԳԻԾ.....	63
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ .....	68
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ/ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ .....	74
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .....	76
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	84

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախաձեռնող	Յուրի Աֆրիկյան
Նախաձեռնողի հասցեն՝	Հասցե՝ ք. Երևան, Րաֆֆու փող, 55 շենք, քն. 39 E-mail. ececaucasus@gmail.com
Նախատեսվող գործունեության հասցեն՝	ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Ոսկերիչների փ., հ. 2/5, 2/6 և 2/7
Հեռախոս՝	098131471, 099772525
Նախագծի մշակող՝	«Արխիմոդոլ» ՍՊԸ Տնօրեն՝ Ա. Հակոբյան
Հողամասի ընդհանուր մակերեսը	2556.38 քմ
Կառուցապատման մակերեսը/0.000 նիշով/	1270.0 քմ (49.7%)
Կառուցապատման մակերեսը/0.000 նիշով բաց հարթակները ներառյալ/	1527.5 քմ (59.75%)
Կանաչապատման մակերեսը	1023.5 քմ (40%)

2. ՇՄԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

**Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը** (ՀՕ-211, 27.11.2006 թ.) -կարգավորում է ՀՀ-ում բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

**«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք** (1999թ.): Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական

աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«**Կենդանական աշխարհի մասին**» **ՀՀ օրենք** (2000թ.): Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«**ՀՀ հողային օրենսգիրք**» (2001թ.): Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«**Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին**» **ՀՀ օրենք** (2008թ.): Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«**Քաղաքաշինության մասին**» **ՀՀ օրենք** (1998): Կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«**Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների Համար պատասխանատվության մասին**» **ՀՀ Օրենքը** (28 ապրիլի 1999թ.): Սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի,

ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

«**Սեյսմիկ պաշտպանության մասին**» **ՀՀ Օրենքը** (ՀՕ-376-Ն՝ 2002թ. հունիսի 12): Կարգավորում է սեյսմիկ անվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունները Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև այլ օրենքներով և իրավական ակտերով:

«**Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին**» **ՀՀ օրենք** (2014) **հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին** (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) **Օրենք՝** – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

Համաձայն Օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի մինչև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը շարունակում են գործել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի համապատասխան դրույթները:

«**Մթնոլորտային օդի պահպանության մասին**» **ՀՀ օրենք** (ՀՕ-522-Ն (ընդունված 19994թ. և լրամշակված 2022թ.))- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«**Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին**» **ՀՀ օրենք** (1998թ.): Ներառում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիճակագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«**Թափոնների մասին**» **ՀՀ օրենքը** (2004թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«**Աղբահանության և սանիտարական մաքրման մասին**» **օրենքը** (2011թ.)- կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու,

պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

**ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:**

**ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում՝ «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»:**

**ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:**

**ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում՝ «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:**

**ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում՝ «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:**

**ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի 08.09. 2011թ. N1396-Ն որոշում՝ «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի n 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու եվ 2001 թվականի ապրիլի 12-ի n 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»:**

**ՀՀ կառավարության 16 հունվարի 2014 թվականի N55-Ն որոշում՝ Քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը:**

**Ջրային օրենսգիրքը.**

**ՀՀ կառավարության 20.01.2005թ. «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշումը.**

**ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշումը.**

**ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N781-Ն որոշումը:**

### 3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Նախատեսվող գործունեության նպատակն է Հաղթանակ կամրջի հարևանությամբ գտնվող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակությունների արդյունավետ իրացումը՝ բազմաֆունկցիոնալ հասարակական և բնակելի համալիրի կառուցապատմամբ:

Նշված գործունեության իրականացման համար մշակվել է աշխատանքային նախագիծը՝ համաձայն Երևանի քաղաքապետի կողմից 09.09.2021թ-ին տրված N 01/18-07/1-Մ-12113-844 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի):

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն:


Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի՝ ներկայացված նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ, որոնք կմեղմեն, նվազագույնի կհասցնեն կամ կբացառեն հնարավոր բացասական ազդեցությունները: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

#### 4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՔԱՐՏԵՐ-ՍԽԵՄԱՆԵՐԸ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ


Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է Կենտրոն վարչական շրջանում, Հաղթանակ կամրջի հարևանությամբ, ստորև ներկայացված իրավիճակային հատակագծով.

Նկար 1. Իրավիճակային հատակագիծ






Նկար 2. Գլխավոր հատակագիծ Մ 1:5000



Նկար 3. Գլխավոր հատակագիծ Մ 1:2000





Նկար 5. Լուսանկար-1 տարածքից



Նկար 6. Լուսանկար-2 տարածքից



#### 4.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևան քաղաքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում

ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆրակցիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Ֆիզիկատերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարսող, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են:

#### 4.2 Կլիման

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը  $24.5^{\circ}\text{C}$ , միջին տարեկան հարաբերական խոնավությունը 49%, լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը  $-2.9^{\circ}\text{C}$  է:

Առանց սառնամանիքների ժամանակաշրջանը կազմում է 213 օր, առանձին տարիներին տատանվելով 163-ից մինչև 234 օր: Օդի միջին ջերմաստիճանն ըստ բարձրության տատանվում է  $11.5-12^{\circ}\text{C}$ : Բացառձակ նվազագույն ջերմաստիճանը դիտվել է հունվարին՝ մինուս  $21^{\circ}\text{C}$ , բացառձակ առավելագույնը՝ հուլիս-օգոստոս ամիսներին՝  $+41^{\circ}\text{C}$ :

Տարածքի համար բնորոշ քամու ուղղությունը հյուսիս-արևելյան է: Ձմռան ամիսներին հաճախակի դիտվում են հանդարտ և թույլ քամիներով եղանակներ, ինչը ռելիեֆի գոգավորության պայմաններում նպաստում է սառը օդի լճացմանը: Քամու առավելագույն արագությունը 25 տարվա ընթացքում 25մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ: Ձյան նորմատիվային ճնշումը՝  $70\text{կգ/մ}^2$  է: Գրունտի սառչման առավելագույն խորությունը՝ 60 սմ է:

Լեռնային երկրներին հատուկ օրինաչափությամբ՝ ՀՀ-ում կլիմայական գոտիները փոխվում են ըստ բարձրության: Կլիմա. ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանների բնութագրի համար հիմք է ընդունվել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Օդի միջին ջերմաստիճանը,  $^{\circ}\text{C}$

Աղյուսակ 1.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը, %

Միջինը ըստ ամիսների, %											միջին տարեկան	
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI		XII
79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61

Տեղումների բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում: Էրեբունի կայանը գտնվում է 888 մ ծ.մ. բարձրության վրա: Կլիման բնութագրվում է տեղումների ցածր քանակով: Տեղումների միջին տարեկան նորման չի գերազանցում

316 մմ: Շրջակայքում գոլորշիացման էներգետիկական հնարավորությունները զգալիորեն գերազանցում են տեղումների քանակը, այդ պատճառով կլիման չոր է:

Ձյան ծածկույթի առավելագույն դեկադային բարձրությունը կազմում է 58 սմ, ճնշումը – 70 կգ/մ<sup>2</sup>: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 60 սմ: Ձյան ծածկույթով օրերի միջին քանակը կազմում է 48: Հաստատուն ծածկույթը գոյանում է ոչ ամեն տարի:

Տեղումների բնութագիրը

Աղյուսակ 3.

Տեղումների քանակը <u>միջին</u> , մմ												տարեկան
մաքսիմալ օրական												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291
24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51

Քամու նվազագույն միջին արագությունը հուլիս ամսին, որի կրկնվողությունը հասնում է 16 տոկոս, կազմում է 7.2 մ/վրկ: Քամու բացարձակ առավելագույն արագությունը 20 տարի մեկ անգամ հասնում է 24 մ/վրկ: Նորմատիվ հողմաբեռնվածքը կազմում է 45 կգ/մ<sup>2</sup>:

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 4-ում:

Քամու բնութագիրը

Աղյուսակ 4.

ամիս	քամու կրկնվողությունն ըստ ուղղությունների և անդորրի, %								
	քամու միջին արագությունը, մ/վրկ								
	Հս	ՀսԱրլ	Արլ	ՀվԱրլ	Հվ	ՀվԱրմ	Արմ	ՀսԱրմ	Անդորր
I	4	9	11	14	21	25	12	4	76
	2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7	
IV	7	14	8	16	20	16	13	6	45

	3.1	3.2	2.8	4.0	3.1	3.0	3.8	3.6	
VII	17	28	4	9	17	13	8	4	36
	5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3	
X	6	18	10	10	21	20	10	5	63
	2.9	2.5	2.1	2.5	2.3	2.4	2.9	3.5	

Տարվա հաշվարկային կլիմայական պարամետրերը բերված են 5 – 6 աղյուսակներում:

Աղյուսակ 5. Տարվա տաք ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C				
	ապահովվածություն		բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական տատանումը
	0.95	0.99			
1	2	3	4	5	6
Երևան «Էրեբունի»	33	34	42	33.3	15.1

Աղյուսակ 6. Տարվա ցուրտ ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C								
	ամենացուրտ օրվա		ամենացուրտ հնգօրյակի		ամենացուրտ ժամանակահատվածի միջինը	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական տատանումը	Տևողությունը, օր	
	ապահովվածություն							Միջին ջերմաստիճանը ժամանակահատվածի միջին օրական ջերմաստիճանով ոչ բարձր	0 °C-ից
	0.98	0.92	0.98	0.92					
1	2	3	4	5	6	7	8	9	10
Երևան «Էրեբունի»	-22	-20	-19	-18	-3.8	-28	8.3	70	159



**«Երևան Արարկիր» օդերևութաբանական կայանի կլիմայական տարրերի արժեքները**

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան «Արարկիր»	-2.7	-0.2	5.8	11.9	16.6	21.3	24.9	24.7	20.4	13.7	6.6	0.2	11.9	-20.6	41.9

**Օդի միջին առավելագույն (մ.ա.) և միջին նվազագույն (մ.ն.) ջերմաստիճանը**

Բնակավայրի անվանումը	մ.ա. / մ.ն.	ըստ ամիսների, °C												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Երևան «Արարկիր»	մ.ա.	1.0	4.3	11.1	17.9	23.1	28.5	32.4	32.1	27.5	19.9	11.5	3.7	17.7
	մ.ն.	-5.4	-3.3	1.8	7.3	11.4	15.4	19.1	18.8	14.4	8.9	3.0	-2.3	7.4

Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	ա/ն	ըստ ամիսների, °C												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Երևան «Արաբկիր»	ա	17.2	18.6	25.3	33.0	34.1	38.4	41.0	41.9	38.0	30.5	23.5	21.4	41.9
	ն	-20.6	-19.0	-16.4	-8.3	1.0	2.1	7.3	8.6	2.6	-3.9	-9.8	-20.0	-20.6

Օդի հարաբերական խոնավություն,

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Երևան «Արաբկիր»	77	70	60	57	57	52	50	50	51	60	68	77	61	77	68	50	37

Մթնոլորտային տեղումներ,

Բնակավայրի անվանումը	Միջին ամսական Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան «Արաբկիր»	28	31	38	52	54	27	18	8	13	29	29	27	354	153	201
	25	28	44	34	47	47	34	22	47	34	48	26	48		

Քամի

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								ըստ ուղղությունների, %		Անդրորրի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Կրկնելիությունը, %				ըստ ուղղությունների											
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16		
Երևան	հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0.9	ՀվԱրմ	1.7	ՀսԱրլ	1.9		

«Արաբկիր»		1.9	1.9	1.6	1.7	1.8	1.5	1.8	1.9							
	ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2.1					
		3.1	2.6	2.3	2.2	2.5	2.4	2.5	2.5							
	հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3.4					
		6.0	4.8	1.7	1.7	1.7	1.7	2.0	2.6							
	հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1.8					
		3.1	3.1	3.6	3.0	1.8	2.5	2.4	1.9							


### 4.3 Օդային ավազան


Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160-Ն որոշման:

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակություններն որոշելու համար 2023 թվականի 2-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են [www.meteomonitoring.am](http://www.meteomonitoring.am) ինտերնետային կայքում:


2023 թվականի 2-րդ եռամսյակում մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է Ալավերդի, Հրազդան, Գյումրի և Արարատ քաղաքներում: Փոշով աղտոտվածությունը կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:

Երևան քաղաքում կատարվում են փոշու\*, ծծմբի երկօքսիդի\*\*, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան: 2023 թվականի 2-րդ եռամսյակում Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:






**Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները**




**Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները**




**Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները**


**Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի SO<sub>2</sub> միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**



- Պայմանական նշաններ**
- ⬠ Պասիվ նմուշառման դիտակետեր
  - ⬠ Ակտիվ նմուշառման դիտակայաններ
  - Գետային ցանց
  - Ճանապարհներ և փողոցներ
  - Երկաթգծեր
  - Երևանի վարչական շրջաններ





Մայրի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (նգ/մ<sup>3</sup>)





**Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO<sub>2</sub>) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**



- Պայմանական նշաններ**
- Պատիվ նմուշառման դիտակետեր
  - Անտիվ նմուշառման դիտակայաններ
  - Գետային ցանց
  - Ճանապարհներ և փողոցներ
  - Երկաթգծեր
  - Երևանի վարչական շրջաններ



Սույն հաշվետվությամբ ներկայացված նախատեսվող գործունեության հետևանքով օդային ավազանի աղտոտվածության էական ավելացում չի սպասվում՝ շինարարության փուլի մեղմացնող միջոցառումների շնորհիվ, որի նկարագրությունը բերված է Հավելված 1-ում ներկայացված բնապահպանական ռիսկերը մեղմացնող միջոցառումների ծրագրում:

#### 4.4 Զրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոօթերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:


Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 151 դիտակետ Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա, որոնցում կատարվում են ամենօրյա դիտարկումներ ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների դիտարկումներ և ջրի ելքի չափումներ: ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Զրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում: Հրազդանի Զրավազանային Կառավարման Տարածքը (ԶԿՏ) ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը:

2023 թվականի 2-րդ եռամսյակում Հրազդանի ԶԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում. այդ թվում՝ 13 գետային. 2 ջրամբարային և մեկ 1 ջրանցքի:

Հրազդան գետի Երևանի հատվածում՝ Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ ապրիլ և հունիս ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գետառ գետի ջրի որակը ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

**ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2021 թվական**



ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային/6 ջրավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ

հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, մանգանով, վանադիումով, կալիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով<sup>2</sup>:

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով և վանադիումով:<sup>3</sup>

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

#### 4.5 Հողերի նկարագիրը

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային կիսաանապատների տարրերով լանդշաֆտային գոտում: Երևանի հողերը տիպիկ գորշ, կիսաանապատային են՝ սննդանյութերով աղքատ, հարուստ կարբոնատներով: Այս տիպի հողերը սակավազոր են, ունեն կավավազային կազմ, աչքի են ընկնում կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ և քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով:

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Հողային աշխատանքների ժամանակ, գրունտի մշակման աշխատանքներից առաջացող ոչ պիտանի հողային հանույթը կուտակվելու են կազմակերպված շինարարական հրապարակի տարածքում, որտեղից էլ տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված/համաձայնեցված վայր:

#### 4.6 Բուսական աշխարհ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝ 1. Ֆրիգանա (ժայռային բուսականություն), 2. Տոմիլյար (անապատային): Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել:

#### 4.7 Կենդանական աշխարհ

Երևանի շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով:

Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դողդը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատու սցինկը, օձերից՝ կույր օձուկը, ռնգեղջյուր օձը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր: Հրազդան գետում հանդիպում են ձկների 7 տեսակ:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Կենտրոն վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների հետ:

#### 4.8 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Նախատեսվող գործունեության հարակից տարածքներում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան: Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներից Երևան քաղաքին հարավ-արևելքից համեմատաբար մոտ տեղակայված է «Էրեբունի» պետական արգելոցը: Արգելոցի ամփոփ նկարագիրը բերված է ստորև.

- Արգելոցի ստեղծման տարեթիվը ՀՍՍՀ ՍՍ 27.05.1981թ. N324 որոշում:
- Տարածքը՝ 89 հա:
- Գտնվելու վայրը՝ Երևան քաղաքի հարավ-արևելյան մասում (Շորթուլաղ և Գեղադիր գյուղերի միջև) լեռնային տափաստանների և կիսաանապատների սահմանագծում, արևմտյան դիրքադրության լեռնային քսերոֆիտ լանջեր, ծ.մ. 1300-1400 մ:
- Ստեղծման նպատակը՝ վայրի հացազգիների, այդ թվում ցորենի հարյուրից ավելի գենոֆոնդի և դրա աճելավայրի պահպանություն: Լեռնային քսերոֆիտ էնդեմիկ և եզակի բնական համալիրներ, այդ թվում վայրի հացազգիների 100 ավելի տարատեսակներ, 9 տեսակի սողուններ, 50 տեսակի թռչուններ, անթավոր բույսերի 293 տեսակներ
- Գերատեսչական ենթակայությունը՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ

Բացի վերը ներկայացված բնության հատուկ պահպանվող տարածքը, ք. Երևանում հաշվառված են և ՀՀ կառավարության 2008թ-ի N 967-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բնության հուշարձանների ցանկում ներառված են ստորև 2 երկրաբանական տիպի բնության հուշարձանները.

105.	«Անանուն» սյունաձև բազալիտներ	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, Սք. Սարգիս Եկեղեցու մոտ
106.	«Անանուն» սյունաձև բազալիտներ	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում մանկական ե/գ տանող թունելի արմ ճակատամուտքի մոտ

Նախատեսվող գործունեությանը համեմատաբար մոտ, ուղիղ գիտով շուրջ 1 կմ հեռավորության վրա գտնվում է վերը ներկայացված 105 համարի տակ հաշվառված բնության հուշարձանը, որը որևէ կերպ բացասական ազդեցության չի ենթարկվելու նախատեսվող գործունեությունից:

#### 4.9 Կանաչապատման լուծումներ: Դենդրոնախագիծ

Նախատեսվող գործունեության նախագծին համապատասխան, մշակվել է նաև կանաչապատման նախագիծը, որը սահմանված ընթացակարգերով համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ (Երևանի քաղաքապետարանի 11.01.2024թ-ի N 17/4834-24 գրություն): Կանաչապատման նախագծից կարևոր ցուցանիշների և փաստաթղթերի քաղվածքը ներկայացված է սույն հաշվետվության Հավելված 5-ում:

#### 5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՋՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

Համաձայն նախագծի, կառուցապատվող հասարակական նշանակության շինությունը բաղկացած է լինելու 4 վերգետնյա հարկերից՝ կիրճի կողմից, 2 ստորգետնյա հարկերից և մեկ հարկից՝ կիրճի վերին նիշի նկատմամբ:

Կառուցապատման ցուցանիշները հետևյալն են.

- Հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 2556,38 քմ
- Կառուցապատման մակերեսը 0,00 նիշ՝ 1270,0 քմ/49.7%
- Կառուցապատման մակերեսը բաց հարթակները ներառյալ 0,00 նիշ՝ 1527,50 քմ/59.75%
- Կանաչապատման մակերեսը՝ 1023,5 /40%

Հատկացված հողատարածքը գտնվում է մասամբ կառուցապատման կարգավորման գոտում, մասամբ՝ լանդշաֆտի պահպանման գոտում, իսկ մի մասը կամրջի՝ որպես հուշարձանի պահպանության գոտում:

Հողատարածքի մակերեսը կազմում է 2556 քմ, որից 514 քմ-ը գտնվում է պահպանության գոտում, համապատասխանաբար 514 քմ հողատարածքը վերգետնյա մասում չի կառուցապատվում:

Կառույցի մի մասը ներառում է 23 ապարտամենտ, իսկ հյուրանոցային մասը՝ 26 համար: Կառույցը ներառում է նաև համալիրը սպասարկող հասարակական տարածքներ:

Կառույցի բարձրությունը չի գերազանցում ճարտարապետահատակագծային առաջադրանքով սահմանված 5.00 նիշը, բացի տանիքը սպասարկող աստիճանավանդակները: Կառույցը սպասարկող հիմնական ճանապարհը նախատեսվում է ունենալ կիրճի կողմից: Դեպի ստորգետնյա ավտոկայանատեղի մուտքերը իրականացվում են համապատասխանաբար կիրճի կողմից նախատեսվող ճանապարհով:

Յուրաքանչյուր ստորգետնյա հարկ ավտոմեքենաների մուտքն իրականացվում է

առանձին: Ռելիեֆի շնորհիվ դեպի ավտոկայանատեղիները տանող թեքահարթակները մասամբ մնում են աննկատ, քանի որ նախատեսվում է ըստ նախագծի իրականացնել ծածկով, որը կանաչապատվելու է և հնարավորինս ներգծվելու է տեղի լանդշաֆտին:

Տանիքը օգտագործվող է, նախատեսվում է ունենալ բացօթյա լողավազան և այն սպասարկող հանդերձարաններ և սրճարան-բար:

Դեպի կիրճը նայող ճակատի ծավալատարածական լուծումներում փորձ է արվել հավատարիմ մնալ երբեմնի Ձորագյուղ թաղամասին հատուկ՝ ժամանակի ընթացքում ձևավորված ճարտարապետական կերպարին: Այս մտահղացման նպատակն է վերականգնել հայկական կենցաղին բնորոշ կոլորիտային մթնոլորտը, որը հնարավորություն կտա ձևավորելու մի ուրույն միջավայր՝ հնի ու նորի միաձուլման փորձով: Այդ միջավայրը պետք է նպաստի Հրազդանի կիրճի ընդհանուր վերակենդանացման ծրագրին, խթան հանդիսանա այդ ամբողջ վերնակույքար ճարտարապետության վերածննդն ու կիրճի բարեկարգմանը, դարձնելու այն երևանցիների համար բնության և ճարտարապետության, հանգստի, ժամանցի միաձուլման մի փորձ, զբոսաշրջիկների ներգրավմամբ:

Աստիճանավանդակները կառույցում հակահրդեհային են և ինքնափակվող: Ամբողջ կառույցում նախատեսվում է ունենալ սպրինկլերային հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգ: Նկուղային հարկերը կարող են ծառայել նաև որպես ապաստարան:

## 6. Ջրամատակարարում և ջրահեռացում

Նախագծի «Ջրամատակարարում և ջրահեռացում» մասով նախատեսվում է կառուցապատման տարածքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի և ենթակառույցների նախագծում համաձայն ՀՀ-ում գործող շին. նորմերի և կանոնների:

Տարածքի կանաչապատ տարածքների, ծառերի ու սիզամարգերի ջրումը իրականացվում է ոռոգման համակարգի միջոցով: Որպես հիմնական ջրաղբյուր ծառայելու է գործող ոռոգման համակարգը: Ջրման ենթակա տարածքը բաժանված է տեղամասերի: Ջրման հաշվային համարվող I տեղամասի ջրածախսը՝  $q=6.45+3.2=9.65$ լ/վրկ:

Ջրումը տեղամասում տևում է՝  $5.11/6.45=0.79$ ժամ կամ մոտ 48 րոպե:

Պահանջվող ճնշումը՝

$$H=H_{երկ}+h_{ազ.}+h_{դ.}=(34.50-30.95)+20+8.20=31.75\text{մ}\times 1.3=41.27\text{մ:}$$

Ոռոգման ցանցը փակուղային է և տեղադրվում է գետնի մակերևույթից 0.3մ խորության վրա, իսկ ճանապարհների հետ հատման տեղերում 1.0 մ խորությամբ: Պողպատե և պլաստմասե խողովակների միացումը իրականացվում է կցաշուրթերի միջոցով (տես հանգույցը):

Ճանապարհները հատելիս խողովակները անցնում են պողպատե պատյանների միջով:

Ոռոգման ցանցը իրականացվում է պլաստմասե խողովակներով: Ոռոգման համակարգը ջրարբիացման սեզոնը վերջանալուց հետո դատարկվում է կամ ցածրադիր մասերում տեղադրված ծորակներով ու ցայտիչներով, կամ առանձին թողարկներով, որոնք տեղադրված են ցանցի ցածրադիր կետերում:

## 7. Էլեկտրամատակարարում

Ներքին էլեկտրամատակարարման աշխատանքային գծագրերը մշակվել են ըստ հետևյալ փաստաթղթերի՝ ճարտարապետական և շինարարական գծագրեր, ճարտարագիտական խմբերին տրամադրված առաջադրանքներ: Տարածքի էլեկտրամատակարարումը, ինչպես նաև դիզայնի և լուսավորությունը իրականացվում է մուտքի մոտի ցածր լարման վահանակից:

Էլեկտրաէներգիայի հաշվիչը կտեղադրվի սնման աղբյուրի մոտ: Էլեկտրամատակարարումը իրականացվելու է 3-գծային սխեմայով, 220Վ լարմամբ, 50Հց հաճախականությամբ: Սնուցող մալուխները բաշխիչ ցանցերը իրականացվում են PVC/PVC տիպի միաձույլ պղնձե մալուխների միջոցով՝ պարփակված ՊՎՔ խողովակի մեջ և ամրակով ամրացված: Տարածքում նախատեսված են նաև հողանցման հպակով վարդակներ, ինչպես նաև տեսախցիկներով հսկողության համակարգ, որի բաշխիչը գտնվում է էլ. վահանակի կողքին, իսկ տեսահսկողությունն իրականացվում է հիմնական մասնաշենքում՝ 200մ հեռավորության վրա:

### 8. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի՝ «աշխատանքների ընդհանրացված փուլի» կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների՝ «աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և



կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2.Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3.Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4.Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման« հրահանգման ժամանակին և որակով անցկացման» անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման» արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կոկտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողը կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

### 8.1 Աշխատանքների կատարման սխեմա

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով
- ժամանակավոր էլեկտրոնմատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն

Հողային աշխատանքները փոստրակում և խրամուղիներում կատարվում են “հետ-բահ” էքսկավատորով:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Ապրանքային բետոնը շինհրապարակ մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից, պատրաստի վիճակում:

Նախատեսվում է փոշուց զերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և իրականացնել պարբերական ջրցան:

Թույլ չտալու համար նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան սարքին և մաքուր վիճակով:

Բնահողով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ:

Երեկոյան ժամերին դադարեցվելու է աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ:

## 8.2 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ՝

- Էքսկավատոր -----2 հատ
- Բուլդոզեր----- 1 հատ
- Ինքնաթափ մեքենա «Կամազ» 2 հատ
- Ավտոկռունկ-----2 հատ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

## 8.3 Ժամանակավոր շինություններ

Շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր շինությունները: Շինությունների տեղադիրքը կհստակեցվի նախագծային աշխատանքների ընթացքում:

8.4 Հիմնական շինարարական աշխատանքների և ռետուրսների ծավալները Հողային աշխատանքների ծավալները հաշվարկված են շինարարական աշխատանքների իրականացման 2 փուլի համար՝

Հանույթ՝ 25944 մ<sup>3</sup>

Հետլիցք՝ 2230 մ<sup>3</sup>

Ավելացած 23714 խմ հողային զանգվածը կտեղափոխվի Երևան քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր, համապատասխան թույլտվություն ստանալուց հետո:

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 20 մարդ, որից

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 2 մարդ
- Արհեստագործներ և բանվորներ - 10 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ - 8 մարդ

#### 8.5 Նյութերի և բնառետուրսների օգտագործում

Կառուցապատման աշխատանքների ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառետուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{E.ի.} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 2 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ

n<sub>1</sub> – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 18 մարդ

N<sub>1</sub> – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ<sup>3</sup>օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 365 օր

$$W_{խ.տ.} = (2 \times 0.016 + 18 \times 0.025) \times 624 = 175,93 \text{մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0,48 \text{մ}^3/\text{օր:}$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ

$$\text{կերպ՝ } U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S<sub>1</sub> – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ<sup>2</sup>,

K<sub>1</sub> – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմը, 0.0015 մ<sup>3</sup>,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 1200

$$U_1 = 500 \times 0.0015 \times 180 = 135 \text{մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.27$$

մ<sup>3</sup>/օր Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 310,93 մ<sup>3</sup>/շին.

ժամ:

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար կօգտագործվեն Ոսկերիչների 8 հասցեի՝ նույն սեփականատիրոջը պատկանող սանհանգույցները:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքներ և տարածքի ջրցանի ջրամատակարարումը կիրականացվի Ոսկերիչների 8 հասցեի՝ նույն սեփականատիրոջը պատկանող տարածքից: Կոյուղին միացված է համայնքային

կոյուղատարին:

9. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

9.1 Թափոնների կառավարում

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը
1.	Շինարարական աղբ	IV	9120060101004	492 մ <sup>3</sup>
2.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	31401100 08 99 5	25944 մ <sup>3</sup>
3.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	2400 տ

Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

9.2 Կառուցապատվող տարածքին մոտ տեղակայված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ակնարկ-վերլուծություն

Մեր կողմից վերլուծվել է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը և առանձնացվել են այն հուշարձանները, որոնք համեմատաբար մոտ են տեղակայված նախատեսվող գործունեության տարածքին: Ստորև ցանկը քաղվածք է Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկից՝ հաստատված ՀՀ կառավարության 2004թ-ի հոկտեմբերի 7-ի N 1616-Ն որոշմամբ.

7.		ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՌՈՒՅՑ. «ԱՐԱՐԱՏ» ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԻԱԿՈՐՄԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ	1887-1910 թթ., 1938 թ., 1945- 1963 թթ.	Իսակովի փող. 9	<
7.1.		գործարանի համալիր. Շուստովի (Թաիրյանի) գինու-կոնյակի գործարանը	19 դ. վրջ-20 դ. սկզբ		<
	7.1.1.	գինու մառան	1887 թ.		<
	7.1.2.	խմորման արտադրամասի մասնաշենք	19 դ. վրջ-20 դ. սկզբ		<
	7.1.3.	կոնյակի մառաններ	19 դ. վրջ— 20 դ. սկզբ		<
	7.1.4.	պահեստի մասնաշենք	19 դ. վրջ-20 դ. սկզբ		<
	7.1.5.	սպիրտի զտման մասնաշենք	1907 թ.		< Ճարտ.՝ Մ. Ֆոն Դեր Նոննե
	7.1.6.	տակառագործական արհեստանոցի մասնաշենք	19 դ. վրջ-20 դ. սկզբ		<
7.2.		Արարատ» գինեգործական արդյունաբերության միավորման մառանների շենք	1937-1961 թթ.		< Ճարտ.՝ Ռ. Իսրայելյան, Գ. Քոչար Կոնստ.՝ Ա. Մարտիրոսյան
	7.2.1.	բարձրաքանդակներ	1961 թ.		< Քանդ.՝ Ա. Հարությունյան էպիգները՝ Ռ. Իսրայելյանի Շենքի ճակատին
7.3.		հուշարձան՝ Գինու կոմբինատի հիմնադրման 100-ամյակին	1977 թ.		S Ճարտ.՝ Ս. Գուրզադյան Համալիրի բակում
8.		ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՇԵՆՔ. «ԱՐԱՐԱՏ» ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՄԻԱԿՈՐՄԱՆ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԳԼԽԱԿՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ (ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ)	1944 թ.	Ծովակալ Իսակովի պող. 2	< Ճարտ.՝ Հ. Մարգարյան Բ. Արզումանյան
	8.1.	բարձրաքանդակներ	1975 թ.		S Քանդ.՝ Ա. Հովսեփյան դահլիճում
	8.2.	խաչքար.	1579 թ.		< Բերված՝ Ջուղայից
	8.3.	հուշարձան՝ Մարգար Սեդրակյանի	1975 թ.		S Քանդ.՝ Ա. Հովսեփյան
32.		ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԱՖՐԻԿՅԱՆՆԵՐԻ (ԱՄԱՌԱՆՈՅ)	20 դ. սկզբ.	Ծովակալ Իսակովի պող. 3	S
	32.1.	գինու մառան	19 դ. վրջ-20 դ. սկզբ		S
	32.1.1.	խաչքար Սուքիասի	1586 թ.		< Խաղողագործության զինեգործության և պտղաբուծության գիտահետազոտական ինստիտուտի կոլեկցիոն գինիների մառանում
75.		ԵԿԵՂԵՑԻ Ս. ՍԱՐԳԻՍ	1842 թ.,	Իսրայելյան փող. 19	< Կրկն՝ 1970 թ. Կրկն Ճարտ.՝ Ռ. Իսրայելյան, Ա. Գալիկյան, քանդ.՝ Ա. Հովսեփյան Կոնստ.՝ Ռ. Մանուկյան
	75.1.	զանգակատուն	1998 թ.		S Ճարտ.՝ Ռ. Ջուլիակյան
	75.2.	խաչքար	1511 թ.		< Առաջնորդարանի շենքի բակի հվ մասում, աղբյուրի մոտ Բերված՝ Սևանի վանքից
	75.3.	խաչքար	16 դ.		< Առաջնորդարանի շենքի բակի հվ մասում, աղբյուրի մոտ Բերված՝ Սևանի վանքից
	75.4.	խաչքար	16 դ.		< Առաջնորդարանի շենքի բակի հվ մասում, Բերված՝ Սևանի վանքից
	75.5.	խաչքար	16 դ.		< Եկղ-ցու առ պատի տակ Կազմող՝ Հակոբ
	75.6.	տապանաքար	16 դ.		< Եկղ-ցու բակում Բեկորված, բեկորները աղբյուրից հս և հվ
	75.7.	տապանաքար	16 դ.		< Եկղ-ցու բակում, աղբյուրի մոտ
	75.8.	տապանաքար Պարոն Մարգարի	1583 թ.		< Եկղ-ցու բակում
	75.9.	տապանաքար Ջուղայեցի տիրացու	1624 թ.		< Եկղ-ցու բակում, աղբյուրի մոտ

		Պետրոսի				
76.		ԶՈՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ ԵՐԵՎԱՆԻ ԲԵՐԴԻ	1582 թ.– 20 դ. սկզբ	Հրազդանի ծախ ափին	S	
	76.1.	Պարիսպ	16-17 դդ.	Երևանի բերդի տարածքում, Հրազդան գետի ծախ ափին		Հ պահպանվել է մաս ամ հատվածից
78.		ԹԱՏՐՈՆԻ ՇԵՆՔ. ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ	1966 թ.	Գր. Լուսավորչի փող. 6		Հ ճարտ.՝ Ռ. Ալավերդյան, Ս. Բուրխաջյան, Գ. Մնացականյան կոնստ՝ Ռ. Բաղայան 1970 թ. ՀԽՍՀ Պետմրցանակ
	78.1.	բարձրաքանդակներ	1966 թ.			Հ Քանդ.՝ Ա. Հարությունյան Թատրոնի շքամուտքին
	78.2.	բարձրաքանդակ «Հուշկապարիկ»	1976 թ.			Հ Քանդ.՝ Ա. Հարությունյան Թատրոնի շքամուտքի մոտ
	78.3.	հուշարձան Գաբրիել Սունդուկյանի	1972 թ.			Հ Քանդ.՝ Ա. Հարությունյան Թատրոնի շքամուտքի մոտ
	78.4.	պաննո «Հայաստան»	1965 թ.			Հ Նկ.՝ Մ. Սարյան, Հ. Սիրավյան Թատրոնի ձեմասրահում
93.		ՀԻՂՈՒՄԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՇԵՆՔ. ԵՐԵՎԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԷԿ-Ը	1926 թ.	Հրազդանի ծախ ափին		Հ Փիժեռնակաբերդի դիմաց ճարտ.՝ Ա. Թամանյան
156.		ԶՐԱՆՑՈՒՅՑ	1950 թ.	Հրազդան գետի վրա. «Հաղթանակ» կամրջի մոտ		Հ ճարտ.՝ Ռ. Իսրայելյան կոնստ՝ Գ. Եղյան
211.		ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆ ԱՅԳԵՁՈՐ-1	քարի դար, մթա 20-16 դդ. 14-16 դդ.	Հրազդանի ծախ ափին		Կոնդ թաղամասից ծոր տանող գետնուղու աջ կողմում, Այգեծոր թաղամասի տակ Հայտնաբերված՝ 1974
212.		ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆ ԱՅԳԵՁՈՐ-2	չորրորդական շրջան, մթա 20-16 դդ. 14-16 դդ.	Հրազդանի ծախ ափին		Հ ԵրՀԷԿ-1-ի ճանապարհի եզրին, Այգեծոր-1 քարայրից 500-600 մ գետի հոսանքին հակառակ ուղղությամբ
213.		ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆ ԱՅԳԵՁՈՐ-3	մթա 20-16 դդ. 14-16 դդ.	Հրազդանի ծախ ափին		Հ ԵրՀԷԿ-1-ի ճանապարհի եզրին, Այգեծոր-1 քարայրից 500-600 մ գետի հոսանքին հակառակ ուղղությամբ
214.		ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ-1	մթա 20-16 դդ. 14-16 դդ.	Հրազդանի աջ ափին		Հ ԵրՀԷԿ-ի դիմաց, Փիժեռնակաբերդ բերդչեմի մոտ
215.		ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ-2	մթա 20-16 դդ. 14-16 դդ.	Հրազդանի աջ ափին		Հ Կիկյան կամրջից 500 մ գետի հոսանքով ներքև Փիժեռնակաբերդ-1 քարայրից 1,5 կմ հս-ա
216.		ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆ ՋՈՐԱԳՅՈՒԴ-1	ուշ մշնդ			Հ ս. Սարգիս Եկղ-ու տակ դեպի ծորն իջնող աստիճաններից աջ
217.		ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆ ՋՈՐԱԳՅՈՒԴ-2	ուշ մշնդ			Հ Մանկական երկաթուղու վերջնակայարանի մոտ
218.		ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆ ՋՈՐԱԳՅՈՒԴ-3	16-18 դդ.			Հ «Հրազդան» մարզադաշտի դիմաց, հիվանդանոցի շենքի մոտ, Ջորագյուղ-2 քարայրից 200 մ հս, ծորի լանջին Հայտնաբերված 1974
219.		ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆ ՆՈՐԱԳՅՈՒԴ-1	միջին քարի դար, 15-16 դդ.	Նորագյուղ թաղամաս, Գետառ և Հրազդան գետերի խառնարանի մոտ		Հ Հայտնաբերված 1969 թ.
220.		ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆ ՆՈՐԱԳՅՈՒԴ-2	քարի դար, մթա 30-15 դդ.	Նորագյուղ թաղամաս, Ղալմայի այգիների հվ-աե եզրին		Հ Հայտնաբերված՝ 1969 թ. Նորագյուղ-1 քարայրից 100 մ հվ-աե
221.		ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆ ՆՈՐԱԳՅՈՒԴ-3	միջին քարի դար, մթա 1-ին հազ. բրոնզի դար, 13-14 դդ.	Նորագյուղ թաղամաս, Ղալմայի այգիների հվ-աե եզրին		Հ Հայտնաբերված՝ 1969 թ. Նորագյուղ-2 քարայրից 80 մ գետի հոսանքով դեպի վեր
222.		ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆ ՆՈՐԱԳՅՈՒԴ-4	16-17 դդ.	ԵրՀԷԿ-ի դիմաց		Հ
223.		ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆ ՆՈՐԱԳՅՈՒԴ-5	16-17 դդ.	ԵրՀԷԿ-ի դիմաց		Հ
224.		ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆ ՆՈՐԱԳՅՈՒԴ-6	14-16 դդ.	Նորագյուղ թաղամաս, «Արարատ» գինու կոմբինատի դիմաց, Հրազդան գետի հին կամրջի մոտ		Հ Հայտնաբերված՝ 1973 թ. Նորագյուղ-1 քարայրից 500 մ դեպի Նոր Կիլիկիա
225.		ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆ ՆՈՐԱԳՅՈՒԴ-7	14-16 դդ.	Նորագյուղ թաղամաս, «Արարատ» գինու կոմբինատի դիմաց,		Հ Հայտնաբերված՝ 1973 թ. Նորագյուղ-6-ի կողքին

Ըստ ներկայացված ցանկի բուն կառուցապատման ենթակա տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները բացակայում են:

Հարկ է նշել, որ նախատեսվող գործունեության էսքիզային նախագիծը քննարկվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության գիտամեթոդական խորհրդի 2021թ-ի հունիսի 24-ի 5-րդ նիստին, որի արդյունքներով ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը չի առարկել ներկայացված առաջարկին:

10. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
 ԿՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ  
 ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ  
 ԾՐԱԳԻՐ

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով ՀՀ-ում գործող շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս նախաձռնողը ղեկավարվելու է քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցվելու են աղմկոտ աշխատանքների կատարումը:

10.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

10.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

### 10.3 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել
- շինությունների ծածկում անթափանց թաղանթով, համապատասխան բարձրության
- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- իրականացնել շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

### 10.4 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կողորովեն պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի կառուցապատման տարածքի ջրցանման համար՝ համաձայն Շինարարության կազմակերպման նախագծի, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:
- Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի կաթիալային համակարգի ներդրմամբ:

### 10.5 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ N1404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.
  - Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
  - Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:
  - Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:
  - Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոտեղանակներով:
  - Հողի հանված բերրի շերտը լայնակույտերում կարող է պահվել մինչև 20 տարի:



- Լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում կամ ցածր արդյունավետություն ունեցող հանդակներում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:

- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրից:

Նախատեսվող շինարարական աշխատանքները ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Տարածքի նախապատրաստական աշխատանքների և Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է 25944 մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 2230 մ<sup>3</sup> հետլիցք: Ավելցուկային 23714 մ<sup>3</sup> ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնե մակերևույթի կամ պոլիէթիլենային ծածկի կամ փայտյա/մետաղական տակդիրների վրա
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր, տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինարարական աղբից:

#### 10.6 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

#### 10.7 Հակահրդեհային միջոցառումներ

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց- հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

#### 10.8 Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերապ ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 70 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շինհրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը չի գերազանցի սահմանված նորմերը և նույնիսկ միաժամանակ մի քանի շինտեխնիկայի աշխատելու դեպքում կգտնվի թույլատրելի սահմաններում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով կնախաձեռնվեն վերը նկարագրված լրացուցիչ միջոցառումները, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

#### 10.9 Թափոնների կառավարում

Կառուցապատման աշխատանքների ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից

- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Կառուցապատման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

#### 10.10 Տարածքի բարեկարգում կանաչապատում

Նախագծով նախատեսված է շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել:

Կանաչապատման աշխատանքները կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018թ. N108-Ն որոշման համապատասխան:

Նախատեսվող գործունեության նախագծին համապատասխան, մշակվել է նաև կանաչապատման նախագիծը, որը սահմանված ընթացակարգերով համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ (Երևանի քաղաքապետարանի 11.01.2024թ-ի N 17/4834-24 գրություն): Կանաչապատման նախագծից քաղվածքը ներկայացված է սույն հաշվետվության Հավելված 5-ում:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

#### 11. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Կառուցապատման աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
  2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
  3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
  4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
- Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 1մլն

հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 1.500 հազ. դրամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	<p>(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p>
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	<p>(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով</p> <p>(b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>(c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:</p>
	Աղմուկ	<p>(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում</p> <p>(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:</p>

	Թափոնների կառավարում	<p>(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>(b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p> <p>(e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվագ օգտագործել</p>
	Հուշարձանի պահպանություն	<p>(a) Շինարարական անձնակազմի համար կկազմակերպվի մասնագիտական ծանուցում-վերապատրաստում հուշարձանների պահպանության ռեժիմների վերաբերյալ,</p> <p>(b) Շինարարության պատասխանատու անձնակազմին կտրամադրվեն պատասխանատու գերատեսչությունների կոնստրուկտային անձանց հեռախոսահամարները,</p> <p>(c) Շինարարության տեղամասում ծանր տեխնիկայի մուտք ու ելքի, աշխատանքի ժամանակ խստորեն պետք է հետևեն հուշարձանների պահպանության համար սահմանված նորմատիվային պահանջներին,</p> <p>(d) Հուշարձանին հնարավոր վնասներ հասցնելու ռիսկի առկայության դեպքում շինարարության տեղամասի պատասխանատուն կդադարեցնի ռիսկ պարունակող աշխատանքների իրականացումը և ռիսկի մասին անմիջապես կտեղեկացնի իրավասու գերատեսչության պատասխանատու անձանց:</p>

Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	<p>(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով,</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում:</p>
Հետիոտների և երթևեկության ապահովություն	<p>Շինարարական և աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ</li> <li>▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: <ul style="list-style-type: none"> <li>▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին:</li> <li>▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար.</li> <li>▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում</li> </ul> </li> </ul>

<p>Տարածքի բարեկարգում/ կանաչապատում</p> <p>Աղմուկի և թրթռումների կառավարում</p> <p>Թափոնների կառավարում</p>		<ul style="list-style-type: none"> <li>- կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների;</li> <li>- ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը բուսականության բարձր աճն ապահովելու համար</li> <li>- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումների կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում</li> <li>- Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,</li> <li>- Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,</li> <li>- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:</li> <li>- Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;</li> <li>- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</li> <li>- շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</li> <li>- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</li> <li>- Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով նախատեսվածին համաձայն</li> <li>- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի</li> </ul>
--	--	--



▪		օգտագործել - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով
---	--	--

	<p>Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում; Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ</p>	<p>վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;</p>
--	---	--

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում</li> <li>- Բեռնատարերի բեռնվաճուռայան</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Շինհրապարակ</li> <li>- Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ</li> </ul>	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի	Կապալառու

տեխնիկայի տեղաշարժ	սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում			ստուգումների իրականացում	
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն

Աշխատանքի անվտանգություն	<ul style="list-style-type: none"> <li>- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով</li> <li>- Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն</li> </ul>	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Տարածքի	Տեղանքին բնորոշ ծառաթփային	Կառուցապատվող	Կանաչապատման	Շինարարության	Կապալառու

Կանաչապատում, բարեկարգում	բուսականության Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	հողամաս	բոլոր տեղամասերը Արտաքին զննում	Ավարտին Շինարարության ընթացքում	Կապալառու,
Վտանգավոր նյու- թերի և թափոնների կառավարում	վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Շինհրապարակ	Արտաքին զննում		

### ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

#### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

12.04.2024թ.

ք. Երևան

2024թ. ապրիլի 12-ին ժամը 11:00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ (Օրենք), ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման հավելվածով սահմանված կարգով, Երևան, Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում (հասցե՝ Երևան, Վ.Տերյան փ. 44), կայացավ Գրիգոր Գալստյանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ոսկերիչների փողոց հ. 2/5, 2/6 և 2/7 հասցեներում հասարակական նշանակության շենք կառուցելու նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային լսումը:

Ներկա էին Երևանի քաղաքապետարանի, Կենտրոն վարչական շրջանի աշխատակազմի, նախաձեռնողի ներկայացուցիչները (Մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով և լուսանկարները կցվում են արձանագրությանը):

#### **Ելույթ ունեցան՝**

Հանրային քննարկումը բացեց **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ**, համայնքի ղեկավարի կողմից հանրային լսման համար լիազորված անձ՝ Էլլադա Արամյանը: Ներկայացրեց հանրային լսման առարկան, նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկման իրականացման կարգը՝ համաձայն կառավարության որոշման: Նշեց, որ հանրային քննարկման վերաբերյալ ծանուցումը կատարվել է Օրենքի և կառավարության որոշման պահանջներին համապատասխան և սահմանված ժամկետներում հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է «Առավոտ» օրաթերթում, տեղադրվել է քաղաքապետարանի պաշտոնական կայքում: Նշեց նաև, որ շահագրգիռ հանրության կողմից գրավոր առաջարկություններ, դիտողություններ և կարծիքներ ծանուցումից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում քաղաքապետարան չեն ներկայացվել: Այնուհետև խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցչին:

